

Ազգը լքեց կեղծ վարդապետներու բոլոր սը-
նոտի եւ արտառոց հաստատումները, զորս,
հպարտութեան եւ ատելութեան բորբոքու-
մով դէպի հերձուած տարուելով, անոնք
համարձակած են ընդունիլ եւ խօսքերով ու
գրութիւններով ամպարչաօրէն դատապար-
տել Քրիստոսի Տիեզերական Եկեղեցին,
արեւելեանն ու արեւմտեանը, եւ հիմնել
աղանդ մը անոր դէմ: Անշուշտ այս բաները
կ'ըսեմ, ո՛վ ազնուաշուք Տէր, ոչ թէ ուղե-
լով հմտացնել աչքառու իմաստութիւնդ, ո-
րուն այս ամէնը լաւ ծանօթ է, այլ որպէս-
զի զդուշնաս հայ քահանայի մը նենդութե-
նէն, որ օտար երկրէ ինքնակոչ կերպով այս
եկեղեցին մտնելով, ջանաց ամբողջ զօրու-
թեամբ, անխոհեմները խաբելով, քանգել
վերոյիշեալ սուրբ միութիւնը. բայց երբ
երեւան ելաւ իբրեւ հասարակաց խաղաղու-
թեան վրդովիչ եւ հակառակորդ մը ամենուն
միահամուռ կամքին, եւ այս թագաւորու-
թենէն դուրս աքսորուեցաւ եւ վտարուեցաւ,
լսեցինք որ քովդ պիտի երթայ, որպէսզի
Վեհութեանդ մօտ մեր դէմ խնդիրներ յա-
րուցանէ, անգիտանալով որ Դուն մեզի հան-
դէպ բարեացակամ եւ արդար դատաւոր՝
երբեք պիտի չհաւատաս անմիտ մարդու մը
եւ շատախօսի մը զրպարտութիւններուն,
այլ ընդհակառակն խստիւ պիտի այպանես
լրբութիւնը հերետիկոսին, որ մինչդեռ իր
օգտին համար կեղծաւորութեամբ կը պար-
ծենար՝ թէ ինք շատ կը սիրէ էջմիածնի Ա-
թոռը (ինչպէս ուսմկօրէն կը կոչեն), սա-